16428

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«21» 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0237-23

Ձեռնարկողը՝ ***«Եգորյան և Որդիներ» ՍՊԸ***
Գեղարքունիքի մարզ, Ներքին Գեղաշեն, ն. Դուրան 5-րդ փ., 5-րդ փ.

Գործունեությունը՝ ***Մարտունու բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0237-23

<21> դեկտեմբերի 2023թ.

Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Եգորյան և Որդիներ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզի, Մարտունի համայնքի, Գեղհովիտ բնակավայր

Ներածական մաս. Մարտունու բազալտի հանքավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի վարչական տարածքում: Մոտակա բնակավայրերն են Մարտունի քաղաքը, Գեղհովիտ, Լեռնահովիտ, Մադինա, Աստղաձոր, Զոլաքար, Ներքին և Վերին Գետաշեն բնակավայրերը: Հանքավայրի բացարձակ նիշը տատանվում է 2115մ-ից մինչև 2190մ-ի սահմաններում:

Գործունեության համար հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ գործառնական նշանակությունը (կամ հողատեսքը) արոտավայր, և գտնվում են 05-027-0401-0023 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի:

Նկարագրական մաս. Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի 29.04.1967թ.-ի N162 արձանագրությամբ 1967 թվականի հունվարի 1-ի դրությամբ, ըստ A, B և C1 կարգերի համապատասխանաբար՝ 845.0հազ.մ^3, 2687.0հազ.մ^3 և 3005.0հազ.մ^3 քանակություններով: Բլոկի ելքը լեռնային ապարներից կազմում է 34%:

Բազալտները կարող են օգտագործվել հիմքերի և ցոկոլային հարկերի շարի համար, ինչպես նաև որպես խիճ՝ գրունտային ճանապարհների ծածկի համար:

Համաձայն պինդ օգտակար հանածոների պաշարների դասակարգման /1960թ/ հանքավայրը վերագրվում է 1-ին խմբին:

Հայցվող տեղամասի կոորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով

1. Y=8522816.2868 X=4439175.0674
2. Y=8522816.0000 X=4439233.0000
3. Y=8522862.1030 X=4439464.1553
4. Y=8522925.0700 X=4439440.4229
5. Y=8522921.7647 X=4439352.3604
6. Y=8522866.9923 X=4439300.9930
7. Y=8522846.0279 X=4439172.8875

Բազալտները իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով ապահովում են «ГОUS 4001-58 "Камни строительные из известняков и туфов" և РТУ Арм ССР 100-62 "Камни строительные из туфов и базальтов" պահանջներին և կարող են օգտագործվել որպես պատքար:

Խիտ տարատեսակները 2200կգ/մ^3 –ից ավել ծավալային կշռով կարող են օգտագործվել նաև հիմքերի և ցոկոլային հարկերի շարի համար:

Բազալտի հաստվածքի միջին հզորությունը կազմում է 23,35մ, մակաբացման ապարներինը 1,4մ:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից՝ տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով՝ HITACHI ZX 500 LCH-BE էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Հանքավայրի մշակման համար ընտրվում է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ՝ մակաբացման ապարների արտաքին ժամանակավոր լցակույտերի տեղափոխումով:

Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը – 295մ,
- ամենամեծ լայնությունը – 80մ,
- բացահանքի առավելագույն խորությունը – 38.0մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը –1.1մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը – 19,5մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 305370մ^3, տարեկան արտադրողականությունը՝ 15269մ^3 մարվող պաշար:

այդ թվում 40900մ^3 2-B բլոկից և 264470մ^3 3-C1 բլոկից:

- արդյունահանվող պաշարների քանակը՝– 256230մ^3, տարեկան արդյունահանվող պաշարները՝ 13000մ^3:
- մակաբացման ապարների քանակը – 16950մ^3,
- բացահանքի օտարման մակերեսը – 1,52հա,

Մակաբացման գործակիցը կազմում է 16950:256230=0.066մ^3/մ^3:

Բացահանքի շահագործման ընթացքում տեղի են ունենում օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ (նախագծային կորուստներ), որոնք բաժանվում են երկու խմբի: Այդ կորուստները կազմում են՝ 16,1%:

Բացահանքի աշխատանքային ռեժիմն ընտրվել է ելնելով տեխնիկական առաջադրանքից և կլիմայական պայմաններից: Բացահանքի աշխատանքային ռեժիմն ընդունվում է՝

աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում՝ 260 օր,

-շաբաթվա աշխատանքային օրերի թիվը՝ 5 օր,
- հերթափոխերի թիվը մեկ օրում՝ 1 հերթ,
- հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ,

Բացահանքի բացումը կատարվում է նրա հարավ-արևելյան մասի 2155.0մ բարձրության նիշից:

Ստացված բլոկները տրանսպորտի մեջ բարձելու համար օգտագործվում է KS-3575/KAMAZ-53213/ մակնիշի ավտոմոբիլային կռունկը:

Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած թափոնները 33մ^3 /հերթ ծավալով DT-75 բուլդոզերով տեղափոխվում են միչև 15-20մ հեռավորության վրա և կուտակվում են աշխատանքային հրապարակում, այնուհետև, 2.1մ^3 շերեփի տարողությամբ HITACHI ZX500LCH-BE մակնիշի էքսկավատորով բարձվում են 12տ բեռնատարողությամբ KAMA3-55111 մակնիշի ավտոինքնաթափերը ու տեղափոխվում մինչև 5կմ հեռավորության վրա գտնվող մշակման արտադրամաս, իսկ մակաբացման ապարները մինչև 0.5կմ միջին հեռավորության վրա ձևավորվող ժամանակավոր արտաքին լցակույտ: Ապարների տեղափոխումը կատարվում է 10.0տ բեռնատարողությամբ KAMA3-55111 մակնիշի ավտոինքնաթափի միջոցով:

Բացահանքի լցակույտ առաջացնող ապարներն են հանդիսանում մակաբացման ապարները 16950մ^3 ծավալով և շահագործման առաջին տարվա ընթացքում ձևավորվող արտադրական թափոնները 8580մ^3 ծավալով: Շահագործման երկրորդ տարվանից նախատեսվում է խճի արտադրություն:

Մակաբացման ապարները և առաջին տարվա արտադրական թափոնները մինչև բացահանքի 2130մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումը տեղափոխվում են բացահանքի արևմտյան մասում ձևավորվող արտաքին ժամանակավոր լցակույտ: Ժամանակավոր արտաքին լցակույտը զբաղեցնում է 0,6հա մակերես, 4,0մ միջին բարձրությամբ: 2130մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց մակաբացման ապարները տեղափոխվում են ներբացահանքային տարածք և իրականացվում է ներքին լցակույտաառաջացում: Արտաքին լցակույտից մակաբացման ապարները նույնպես տեղափոխվում են մշակված տարածություն (ներքին լցակույտ) և հարթեցվում: Լցակույտաառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանակով:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Ջուրը բերվում է ZIL MMZ-4502 մակնիշի ավտոմեքենայի վրա հարմարեցված ցիստեռնով ջրցան-լվացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ШН-БЦБ-1.4 ջրի ցիստեռնով:

Բացահանքի հանքաստիճանները մշակվում են 5մ բարձրությամբ հանքաստիճաններով, հաջորդաբար, վերևից-ներքև:

Մշակված տարածության ռեկուլտիվացված տարածքը կազմում է 1.02հա: Ռեկուլտիվացիայի են ենթարկվում նաև արդյունաբերական հրապարակը 0,03հա, բացահանքի արևմտյան մասի նախկինում խախտված տարածքները համապատասխանաբար 0,22հա և 0,02հա մակերեսներով: Ընդհանուր մակերեսը կազմում է 1.29հա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է բիոլոգիական ռեկուլտիվացիա, որի համար նախատեսվում է 100000 ՀՀ դրամ՝ 1հա մակերեսի համար: Ընդհանուրը կլինի 129000 ՀՀ դրամ: Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 2133050 ՀՀ դրամ:

Ըստ հաշվետվության եղած տեղեկատվության՝ բուն հանքավայրի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած տեսակների աճելավայրեր ապրելավայրեր չեն արձանագրվել:

Հանքավայրի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Մոտակա բնության հուշարձանը Արմաղան հրաբխային կոնն է, որը գտնվում է հայցվող տարածքից մոտ 5կմ հարավ-արևմուտք:

Հանքավայրի տարածաշրջանում բնապահպանական տեսանկյունից խոցելի, կամ բնության հատուկ պահպանվող տարածքները բացակայում են:

Հեռավորությունը հայցվող տարածքի և ամենամոտ գտնվող մշակութային հուշարձանի միջև կազմում է ավելի քան 3,5կմ:

Բացահանքի թափոն առաջացնող ապարներն են հանդիսանում մակաբացման ապարները 16950մ^3 ծավալով: Արդյունահանումից առաջացած մակաբացման ապարները հաշվառվել են 34000120 01 99 5 ծածկագրով և դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերը ու կենցաղային աղբը:

Մակերևութային ջրային հոսքեր հանքավայրի տարածքում չկան, ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների գազերի արտանետման վրա տեղադրված են կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ է տալիս կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ,
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածը, արտադրական հրապարակը, մերձատար ճանապարհները ջրցանվում են, ինչը թույլ է տալիս կրճատել փոշու արտանետումները,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա,

ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում,

- արտադրական տարածքի կանաչապատում արագ աճող ծառատեսակներով կամ թփերով,
- ճանապարհների խճապատում, ինչը կնվազեցնի փոշեգոյացումը և հնարավորություն կտա կրճատել տեխնիկական ջրի ծախսը, հետևաբար և ջրառը,
– բացահանքի շահագործման արդյունքում առաջացող արտադրական կեղտաջրերի հավաքում անթափանց հորի մեջ, հետագա դատարկումը կազմակերպել մասնագիտացված ընկերության ուժերով,
– Արգիճի գետի ջրերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում,

-Ընկերության կողմից հետագայում իրականացվելու են վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություն (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ),
-նավթամթերքներ պարունակող թափոնների (յուղոտ լաթեր, բանեցված, ավտոմոբիլային, դիզելային շարժիչների յուղեր) առանձին հավաքում են ամուր փակվող տարողությունների մեջ:
- բանեցված կապարե կուտակիչների պահում մետաղական տարողություններում կամ արկղերում/տուփերում, որոնցում դատարկ տարածությունները լցվում են ամորտիզացման միջոցներով: Հետագայում բանեցված կապարե կուտակիչները նախատեսվում է հանձնել վերամշակման լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպությանը,
- չտեսակավորված կենցաղային աղբը տեղափոխվում է աղբավայր փակ կողեր ունեցող ինքնաթափով, սպասարկման պայմանագրի կնքում ծառայություն մատուցող կազմակերպության հետ,
- աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով;
- աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում Մարտունի խոշորացված համայնքի Մադինա բնակավայրում:
Հանքավայրի շահագործման աշխատանքների ընթացքում «Եգորյան և Որդիներ» ՍՊԸ իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
- Մակերևութային ջրեր /Արգիճի գետի/ պարբերական մշտադիտարկումներ, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով _հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:
-Վայրի բնության կենսամիջավայրի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:
-Աղմուկ և թրթռումներ մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ հաճախականությամբ:
«Եգորյան և Որդիներ» ՍՊԸ բնապահպանական միջոցառումների (մշտադիտարկումների) համար նախատեսվում է տարեկան մասնահանել առնվազն 250.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Գեղարքունիքի մարզպետարանը և ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Եգորյան և Որդիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
Փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան